

967  
968  
969  
970

Oryctes

U.S.A.

28669 ~~11/16~~  
5-84

Fungus 1898

2010

Top R  
Mats Galt Agustine 1891

P.S.  
A

36

183

## ԳԱՂԹԱԿԱՆԻ ՄԸ

ՀԱՄԱՆՈՏ

## ԿԱՐԾԻՔՆԵՐԸ

Խուսահայոց որ դասակարգն որ կուպէ  
թող իրեն խնդի գաղափարովն մնայ իւր  
միակողմանի տեսութեան մէջ, սակայն մենք  
չենք փափաքեր որ այնպէս լինի և Խուս-  
ահայ լրազրութեան վիճակը, նրա գրա-  
գէտ և զարգացած երիտարդութիւնը, նրա  
ինտելիգէնցիան և նրա նոր ու մատադ  
սերունդը:

Էջ 14—15.

ՀՐԱՑԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԵՆԻՎՔ ՏԵՐ-ԱՐԻՍՏԱԿԵԼՍԵԱՆԻ

• (130) •

ՄՈՍԿՈՒԱ.

ՏՊԱՐԱՆ Բ. ԲԱՐԽՈՒԻԴՅԱՆ ԵԱՆԻ.

1900.

9(47.925)

## ԳԱՂԹԱԿԱՆԻ ՄԸ

ՀԱՄԱՌՈՑ

## ԿԱՐԾԻՔՆԵՐԸ

005  
006  
007

Ոռուսահայոց որ դասակարգն որ կուզէ  
Թող իրեն խնդի գաղափարովն մնալ իւր  
միակողմանի տեսութեան մէջ. սակայն մննք  
չենք փափաքեր, որ այնպէս լինի և Ռու-  
սահայ լրազրութեան վիճակը, նրա գրա-  
գէտ և զարգացած երիտասարդութիւնը, նրա  
ինտելիգէնցիան և նրա նոր ու մատադ  
սկզբունդը:

էջ 14—15.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵԽՈՎՔ ՏԷՐ-ԱՐԻՍՏԱԿԵԼՍԵԱՆԻ

• (130) •

ՄՈՍԿՈՒԱ.

ՏՊԱՐԱՆ Ք. ԲԱՐԽՈՒԻԴԱՐԵԱՆԻ.

1900.

13465



# ՀԱ ՎՐԱՄ ԹՐԱՎ

ՀՕՅՄԵՎ

# ԳՐԱՄ ԳՐԱՎԱՐ

Առաջ ու ճշգրտած չեն պահպանություն  
ու առաջ ճանաչված են մասնաւությունը  
և առաջ առաջ պահպանությունը  
ու առաջ ճանաչված են մասնաւությունը

Դозволено цензурою. С.-Петербургъ, 29 Марта 1900 года.

Առաջ ու ճշգրտած խօսքացույնը չ անդամական է ու առաջ ճանաչված է մասնաւությունը  
և առաջ առաջ պահպանությունը  
ու առաջ ճանաչված են մասնաւությունը

ՎՐԱՄ ԳՐԱՎԱՐ

ԱՊՈՒԱԺՈՒՅՆԻՑ ԳՐԱՎ

ՎՐԱՄ ԳՐԱՎ

ՎՐԱՄ ԳՐԱՎ

Տիպոգրիա Խ. Բարխարյան, Մոսկվա, Մ. Զլատուսովսկի պետք., ձ. Գիրշ.

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Աւելի ընդարձակ կարծիքներ հրապարակ հանելու  
զիւրութիւնները չունեի, ուստի համառօտելով զայն,  
ներկայ «Համառօտ կարծիքները» Ռուսահայ յարգելի հա-  
սարակութեան ներկայացնում եմ, իւր լրագրութեան վրա  
աւելի ևս կեղրոնացնելով և մեր ցաւերը՝ և մեր յշուը:  
Կարող եմք և հաւատալ հաստատ, որ Ռուսսահայոց  
զարգացած գասակարգը, կամ իրենց բառովն «Խոտէլիքնեն-  
ցիան», եթէ մեր կարծիքների զործադրութեան ձեռնարկէ,  
և ժամանակակից զարգացման անկեղծ միջոցներով ձանապարհ  
ենէ իւր Թիւրքահայ եղբարց բարոյապէս օգնելու:

Քսաներորդ դարու արշալոյն անհետացնում է հին  
դարու խաւարը. նոր դարուս հետ անշուշա նորանոր յա-  
ռաջադիմական ասպարէզները պիտի ընդայնվին մարդկու-  
թեան զարգացման, նրա մտաւոր և բարոյական բարձրու-  
թեան համար:

Մեր փափագն է, որ մեր Ռուսահայ եղբարքն էլ այս  
նոր դարու հետ նոր ուղղութիւն մը բանան շնորհիւ  
ուռւսական խաղաղասէր ազգեցութեան, և աւելի լուսա-  
ւոր և հեռատես հայեացքներով մօտենան Թրքահայերին  
իրապէս օգտակար լինելու, բարոյական սկզբունքների վրա  
հիմնելով իրենց ձեռնարկները, որով բարձրանում է և  
իրենց բարոյական պատիւն

ԵՆՈՎՔ ՏԵՐ-ԱՐԻՍՏԱԿԵՍԵԱՆ.

Մոսկովա,  
1900.

## ՅԱՅՈՒԹՅՈՅ

ոչինչ խողարացը զմբցի ճայ խանգարմց կմէ Ա  
միայ խոյեածաւաշ խառ միմաց զմբմէ միջոց այս  
աշ միլքայ լուսաւան զմբցի ճայ տօնաւան լուից  
այս մասնեացրաց դա և Նումբալովից մասնեացրաց  
զույ զմ և զմբաց զմ և խոյեածաւորի ու միլքա  
րուցաւան դո տառաւաշ լուսաւան և զմ րոզան  
միլքաւան և միանաց զմբց նախ պրատառայ նարարաց  
միլքաւան մասնեացրաց զմբցի ճայ զմ Ամէ և մահց  
և մասնաց պրատառաշ խոյեաց զմբմէ միջ տօն ծմ  
շումիսան խոյեացրի ճրէիմ մասնեացանասպաց դո  
այնէք սկսացոյակ սկսար լուսաց իշ զմ միջ  
միջ և նումբաւան մասնեացրաց տօն սկսամաս  
այս զմացու աչուցնա ուն և տօն զմ պրատառ տօն  
ուրիշուն միլքաւաց խոյե զմբցի ճայ խանգարման  
ուղևոյ մախարցու և դրան ուն ունիցարցու մասնե  
ունաւ մասնե  
ուն և զրայոր զմաւան զմ դո և մրափափ զմ Ա  
միլքաւ մասնաց դո մասնեացրաց զմ ուն տօն զմ  
ունույ իմ և մասնեացրաց դմասրարամ մախարցուն  
միլքաւաց մասնեած խոյեացրաց ունաւան և զմ  
ուն իմ մասնեացրաց մախարցու ույնէի զմբուրո սկսամ  
և և Նումնեացրաց խոյե զմբմէ մասնեացրի խոյեաց  
մախարցու մախարցու զմբց

ԱՄԵՍՆԵՐԱԿԱՆ ԶԵՂ ԳԻՒՅԾ

և առանձ զմ Անորմ առ միջ պահապատաց մուխոց  
առ և Անորմ զմ խութի միջնաւան մասնեացրաց առ դո պահ  
ու մասնեացր զմ դո այս պահ միջնաւան մասնեացրաց  
առ զմ և մասնեացր զմ միջնաւան մասնեացրաց զմ պահ  
առ զմ պահ մասնեացր զմ միջնաւան մասնեացրաց զմ պահ  
**ԳԱՄԼԹԱԿԱՆԻ ՄՐ**

առ պահ առ պահ զմ պահ մասնեացր զմ պահ  
և մասնեացր զմ իր զմ պահ առ պահ առ պահ մասնեացր զմ պահ  
առ պահ առ պահ առ պահ առ պահ առ պահ առ պահ առ պահ

**ԵՐԲ ամբողջ աշխարհ քսաներորդ դարուն մատե-  
նալու առթիւ փառաւոր հանդէմներով զայն զիմաւորե-  
լու պատրաստվում էր, դժբաղդ Թքահայտանեցին իւր  
սիրած հայրենիքը, իւր տունը ու տեղը թսղնելով դաղ-  
թականութեան ձանապարհն էր վազում, դէպի չարաչար  
կեանքն էր դիմումն Ահա աշխարհիս այդ լուսափայլ նա-  
խատօնակի մը պահուն, մարդկութեան անվայել չարաչար  
զեղծութերը արտաքսում հետացնում, փախցնում էին  
միմեանց վրա կորսուած հայ ընատնիքներից ապրելու  
զժբաղդութիւնը ունեցող անձերին, որք մեծ մատամբ  
ուռսահան հզօր և մարդասէր կայսրութեան սահմաննե-  
րում իրենց կեանքի գյութիւնը պահելու միջոց դտան:**

Ուռսահայ հասարակութիւնը իւր պարտքը կրցածին  
չափ կատարեց օգնելով կերակրելով, բարերարելով, բայց  
և այնպէս ունեցաւ և ունի տակաւին շատ մը պարտքեր  
որ կարող է իրազործել սակայն անիրագործելի է թող-  
նում, որ կարող է կատարել բայց անկարող է ձեւանում  
Մեր ուռսահայ լրազրութիւնն շատ շատ բաներ հրա-  
տարակում է, որք եթէ իրազործելի չըլինէին, իրեւ

ըլովիտի հրատարակէր, թէւ շատ անդամ մենք տեսնում ենք, որ նա միակողմանի տեսութիւնով մը դատում է շատերին, մանաւանդ կղերին. բայց դա էլ իր իրաւունքն է: Կարծեաց ազատութիւնը ընդհանրական է, և մենք լիսայցս եմք, որ Ռուսահայ ինտէլիգենտ եղբարյ մեր կարծիքներում ցոյց տալով և իրեն թոյլ կողմերը, կամ իրեն կատարելիք գործերը, որոնց մէջ ինքն էլ մեր անկարող կտմ անտարբեր հօգեւորականութենէն աւելի շատ իրեն թուլութիւնն ունի, չըպիտի վշտայնեմք իրեն, այլ ընդհակառակն մեր վստահութեան չտփովն էլ համակրութիւնը գտնելու լիսայցս ենք:

Նախապէս յայտնում եմք, որ Ազգի մը հանրային և յառաջադիմական գործերի մէջ կղերից սպասել նախաձեռնութիւն, կը լինէր տղայամառութիւն: Ներկայ դարուս մէջ և յառաջադիմ ազգերի կղերը՝ միայն իւր աղօթքի իրաւունքն ունի. և նրա հանրային գործունէութիւնը միմիայն բարցական ասպարիզում կրնայ երեխի, որ արդէն իրեն միակ կրչումն է:

Թէպէտե մասնաւոր ազգերի մէջ նոյն իսկ քաղաքական դերը կատարելու միջոցներ էլ ունենայ այդ կրօնական զասակարգն, սակայն պատիւ չէ երբէք այդ հասարակութեանն, որ իրեն անել կարողացած պարագերը չըկատարելու թուլութեան մէջ մնալով, յանցանքը միմիայն հօգեւորականի թուլութեանն վերագրէ: Մանաւանդ մեր ազգի ներկայ աղէտալի վիճակը կղերի վրա երբէք յօյու չըկրնար դնել:

Թրքահայասաանում մեր կղերն աւելի քաղաքական պարագեր ունի կատարելիք, և մենք նրանից աւելի իրաւունքներ ունիմք պահանջելու, քանի թէ Ռուսահայ կղերից:

Պոլսի Գում-Գարույի հայոց Պատրիարքարանն այդ տեսակետովն աւելի պատասխանատու է Ազգային պա-

հանջների հանդէպ, քան թէ Արարատեան էջմիածնի Մայր Աթոռը:

Մենք այս ասելով, ոչ առաջինի պարագերը ծանրացնել և ոչ էլ վերջինին արդարացնել ուղում ենք, այլ իրականութեան մը հանդէպ կանդ առնում ենք ակտմայ և ցոյց ենք ատալիս իր կարգին երկուքի պարտաւորութիւններն էլ: Սակայն մեր կարծեաց իսկական սկզբունքն այս է, որ մեր ազգը, այժմ իր յօյու կղերին յանձնանելով, կամ նրա թուլութիւնը միայն նկատելով չէ կարող զարգանալ:

Մեր հասարակութիւնն իր ամեն գասակարգերով իրեն թուլութիւններն ունի. ուստի մեր պարսկն է, որ մեր աշքի եթէ ոչ շուղը, զոնէ գերանը նկատել կարենամք, և ապա ուրիշինը:

Մեռած և թմրած գասակարգերին էլ թողնելոս է, որ իրենց մեռեալները թաղեն, իսկ այն, որ զգում է, այն, որ ուղղագէս գատնում է, այն, որ կարող է, նաև պարաւոր է և ձեռներէց լինել և ազգին իսկապէս օդտակար լինելու միջոցները ընդունել:

Ահա այդ մեր ինտէլիգենտ գասակարգի առաջին պարագն է:

Այս մկըունքովն չէի ուղիր խօսիլ և հոգեորականութեան նկատմամբ, սակայն կրածս տպաւորութիւնները հրապարակաւ յայտնելու փափաքովս, յանդզնում եմ նախապէս և մեր շնորհաշուք Արքազաններին և չայր սուրբերին ուղղել իմ կարծիքները:

Քանի որ մարդու մը երբէք ներելի չէ միմիայն իր զաղագիւնքն, կամ իր կարծիքովն արդարանալ իր ընթացքում, և ոչ էլ անհատ մը իր քմանցոյքին զոհելով հանրային պարտաձանաշութիւնը կարող է արդարանալ նոյնպէս էլ մեր հօգեւորական գասակարգն իրեն շըջապատող պայմանների մէջ ինք զիսքը անկարող յօյց տալով իս-

բող չէ արդարանալ: Նա իրեն աննպաստ պայմաններում ունի և յարմար գործեր, զորս պէտք է պահանջեմք իր մից, քանի որ ընդհանրութեան մի դասակարգն է և ինքն կղերը:

Կղերականութիւնը, իրեւ Աւետարանի մարդասէր ոգոյն առաջնակարգ պաշտօնէութիւն մը, ինքն Ռուսաստանում զիմող գաղթականներին հովանաւորելու առաջին պարտքն ունէր: Սակայն մենք վատահ եմք, որ Եջմիածին իւր օգնութիւնը չըխնայեց, հաց ու հագուստ, զրամ և ուտեստ ցրուեց, որչափ որ կարողացաւ:

Իսկ եթէ հարիւր դժբաղդ պատանիներին յատուկ մի որբանոց հիմնէր, Բարձրագոյն հրամանաւ հաստատելով նրա ապահովութիւնը, աւելի արդիւնաւոր էր, քան թէ ժիր և գործելու կարող անձերի առօրեայ թշուառութիւնները մեղմացնելու վրա միայն մտածէր, զոր երբէք էլ բարւոքելու հնար չըպիտի լինի, եթէ գործնական միջոցներ չը լինին, և աշխատել կարողացողներին աշխատելու միջոցները չըտնուին: Սակայն այդ տեսանք Եջմիածնում իրագործուած:

Ցաւօք սրտի պիտի յայտնեմք, եթէ քանի մը օրբեր հացի հետ և մտաւոր սնունդ ստանալու համար պատապարուել էին վանքի մը մի անկիւնը, ցիրվեցան և զրկուեցան այդ վիճակից:

Խնջուլ.—վասնզի շնորհափայլների առատ սեղանի արդիւնքից քանի մը փշուրները պիտի յատկացուեին այդ դժբաղդ արարածներին, և նրանց ապագային մի ծախուց գուռոը պիտի բացուէր, որով Ծերես աւելի շատ զոհողութեան մը հանդիպեին մեր սրբակրօնները այդ թրքահայ որբերի ներկայութիւնից:

Ահա այսպէս մեր ազգային հաստատութեանց մէջ լուրջ ձեռնարկները չեն յաջողվեր նախանձու և կցը կուսակցական դացումների շնորհիւ, և բարի նպատակ-

ներն թէ յաջող էլ գան, կամ թերի միջոցներով և կամ դժուարութեանց հանդիպելով դադարում են խկոյն:

Երբ ընդհանուր հայեայք մը ձգենք Ռուսահայ հոգեղականութեան վրա, տեսնում ենք, որ իւր կարողութեան համեմատութեամբ նա ունէր պարտքեր՝ զոր կարող էր իրագործել: Ահա զոնէ մինը յիշեմք:

Ծեր և անկարող թշուառներին մի ապաստանարան հիմնելու չափ ձեռնհասութիւն կարող էր ունենալ Ռուսահայ կղերը: Նրա ամբողջական միութեան մասնաւոր դրամական զոհողութիւնն կարող էր հազարաւոր բարելի գոյացնել: և ատոր օրինակին անշուշտ սիրով պիտի հետեւ հանրային կարեկցութեան ոգին, որով զոնէ հարիւր ծերունի և անկարող պառաւ գաղթականներ ապահով միջոց կունենային ապրելու, առանց հրապարակի վրա թափառելու կամ հասարակութեան բեռն լինելու: Նատ մեծ զումար մը հարկաւոր չէր քանի մը տարիները նրանց չափաւոր հանգստութիւն մը տալու: և այդ պաշտօնը ձրի կատարելու համար շատ ծանրութիւն չըպիտի կրկին մեր աւետարանի պաշտօնեայք:

Սյոյն կամ սյոյնպիսի փոքրիկ մի ձեռնարկութիւն, զոնէ 10—20 որբեր պահելու մի հաստատութիւն երեւում է Ռուսաստանում, միմիայն Ռուսահայ կղերի հանրային միութեամբ:

Պատասխանն բացասական է, և դա պարձանք չէ Ռուսահայ հոգեղականութեան:

Եթէ նյոյն իսկ դժուարին էր մի այդպիսի գործի յաջողութիւնը, բայց զոնէ Ռուսահայ կղերն ընդհանուր ջանք մը կամ շարժում մը ցցց տուեց այդպիսի մի ձեռնարկ սկսելու համար: Դա էլ լուսենուեցաւ:

Մենք ծայրայեղ պահանջ մը չըներկայացրինք իրեն, և ոչ էլ լրագրական ծայրայեղութեանները կարգարացնեմք, որ Վանի հայոց կաթոլիկ դասնալու մասին, իրենց

իրուացի մի աղատամիտ կարծեաց մէջ՝ և այնքան իրագործելի մի պահանջ ցոյց էին տալիս, երբ յայտնում էին մօտաւորապէս հետեւեալ կարծիքը.

«Հայ հոգեորականն փոխանակ ողբ բարձրացնելու իւր հօտի կաթոլիկանալուն վրա, թող դուրս գայ էջմիածնից իւր այդ հօտը պաշտպանելու»։ Նշնակէս մի ուրիշ ազատամիտ կարծիք էլ լուսեց մօտաւորապէս հետեւեալ իմաստով «Միթէ հայ Լուսաւորչակոնն միայն արքայութիւն պիտի գնայ, և հայ կաթոլիկն դժոխքը»։

Կրօնական նեղ և կշըր սկզբունքները տաելով հանդերձ, մենք չեմք համաձայնիր այդ կէտում լրազրական ազատ համեզմանն, որի մէջ ազգային շահն է վնասվողն։ Մենք ծաղրում ենք կաթոլիկի երկնից զրախափի բանալիներն էր, Լուսաւորչականի կշըր նախապաշարումն էլ, սակայն ներկայ ընդհանուր վիճակնիս, և անցեալի կաթոլիկութեան աղէտները միշտ զգուանք են պատճառում այն տմեն լուրջ աղքասէրին, որ ազգային զիտակցութեան ոգումն է քննում իրերի ընթացքը։

Մենք շատ ուրախ ենք սակայն, որ նոյն լրազրական ազատամիտ առղերին յաջորդեցին և շատ մը լուրջ յօդուածներ, որոնք բաւականին ցոյց տուին կաթոլիկութեան աւերիչ կողմերը, և լոյս սփուցին նրա անցեալում կատարած և ներկայիս ջանք զրած անաղնիւ միջոցների վրա։

Սակայն մեր ներկայ աղէտալի դրութիւնն ոչ բարոքվում է լուսաւորչական կամ պատպական եկեղեցւց հոգեոր աղօթքներով, և ոչ բողոքականի կամ աւելի ազատամիտների զանազան հայեացքներով։

Այժմ մեզ մտաւոր մնունդ, մտաւոր լրազրացում է կարեոր, և մենք այդ անողումն միայն պիտի կարողանամք զարդանալ և աղգերի մէջ իրրե ինքնուրոյն ազգ մը ձանաշուելու վիճակին հասնել։

Այդ վիճակին հասնելու համար մեղ կղեր պէտք չէ, և ոչ էլ կրօնական բարենորոգմանց հարցեր։ Թող որ մեր լրազրութիւնն իր ամբողջ էջերը նուիրէ քահանայական հարցերին, թող որ միշտ դատէ ու դատապարտէ կղերականութիւնը, սակայն զրանից ոչ մի բան գուրս չե գար, ոչ մի արդիւնաւոր գործ յառաջ չե գնար, քանի որ մենք զարդացած կամ ինտելիգէնս համարուած դասակարգերովն չենք կարողացել զարողացել պարտածանաչ լինել իրաւամբ կարող ենք ասել «կղերն շատ թոյլ և անպարտածանաչ է» բայց նոյն չափովն կրկն անգամ կարող ենք պնդել որ և մեր զարդացած դասակարգն էլ թոյլ է և անպարտածանաչ։

Կղերի քառապատիկ թիւն է կազմում մեր մուսահայ ինտելիգէնցիան, և մենք նոյն չափովն քառապատիկ աննախանձելի վիճակի մէջ տեսնում ենք նրան։

Ինչ հարց որ արինք կղերականին, նոյն կարելի չէ ուղել և մեր լրազրութեանց, որք ուռւական հզօր պաշտպանութեան շնորհիւն, իրենց միացած դրամական միջոցներովն, կամ գոնէ առանձին և կամ հանրային նպաստին զիմելով, մասնաւոր ձեռնարկ մը սկսէին յանուն մուսահայ լրազրութեանն, և նոր յարաբերական միջոցներ ընդունելին իրենց թրքահայ եղբարց վիճակին մօտէն ծանօթանալու, նրանց վերքերը իրենց ձեռներով շօշափելու համար։

Մենք կարող ենք հաւատալ որ թերես կղերականութիւնը կարող է արդարանալ։ «Թէ ինքն չէ կարող էջմիածնից գուրս գալ և իր հօտին հովեօր այցելութեան գնալ թրքահայաստանում»։ Սակայն կարող ենք հաւատալ նշնապէս, որ լրազրական պաշտօնական զիմումներով մուս նառավարութեան բարեսիրական օգնութեամբ, պիտի յաջողվեր մուսահայ թղթակիցների երթեւեկութիւնը ՚ի թրքահայաստան, որոնք կղերի մը ներկայութենէն ա-

ւելի օգտակար ազգեցութիւն կանէին թշուառութեան մէջ յուսահատած, կրօնական խեղջ և տղայական փոփոխամտութեան ենթարկուած ժողովրդին մը վրա: Կրագրական ներկայացուցիչները, իրենց աշխարհայեցողսւթեան փորձառու և լուրջ յորդորներով աւելի կարող էին դէմ դնել իրենց թշուառ եղբարց հոգեկան և նիւթական ծանր կացութեան, և օրինաց վայելով հրահանքներով յըս և հաւատք ներշնչել նրանց, քան թէ հոգեռականների կրօնական քարողները և կամ նրանց դժոխքի ու արքայութեան հարցերը:

Մենք ունեցմէնք այսպիսի հրապարակախօս իրաւաբանների լէզէօններից դոնէ մի անձնաւորութիւնը, որ փորձ արաւ ինքն իր կողմից, կամ հրաւէր կարդաց հանրային ուշաղրութեան, «թէ կաթոլիկ կղերի դէմ կարելի է և աշխարհական անձերով դիմաղրութեան ենել միմիայն կրօնական պարզ բարեսիրութեան ոգովն», որին անշուշտ իր պաշտպանութիւնը պիտի նուիրէր Ռուսազատամիտ կառավարութիւնն. որին պիտի ընդունէր և Թուրք կառավարութիւնն, քանի որ կրօնքի նոր առաքեալների դէմ մի ուրիշի խսկական առաքելական պարտք չէր կարող չըհասկացող ձևանալ:

Սյս հարցը թերեւս Ռուսահայ ինտելեգէնցիային չըհետաքրքրեր, բայց երբ լրացրութիւն մը պարտք է համարում իրեն կոռւել ամեն մէկ անտարբերութեան դէմ միայն կղերականի անտարբերութիւնը չըպէտք է հրապարակ հանէ նոյն խի կրօնական խնդրոց մէջ: Ահա դորձնական տեսակէտով ամենքս էլ անտարբեր հնք. ամենիս այդ անտարբերութիւնն էլ դատապարտելի է. ամենքս էլ մեղաւոր ենք. ամենքս էլ պարտքեր ունիմք կատարելու, բայց զայն թողած միայն իրաւունքնիս ենք փնտուում:

Սակայն ընդհանուր ազգերի համար, նոյնպէս և բնական օրինաց համաձայն, առանց պարտքի իրաւունք մը

չըկայ. առանց պարտաճանաչութեան իրաւունքը ձեռք չըբերուիր:

Մենք կրնանք հաւատալ նոյնպէս, որ հոգեռական այժմ այլ կո մի ազգեցութիւն չունենալով հանգերձ, կարող է նոյն խի իր էջմիածնի պատուիրակ իր թըրքահայ հօտին այցելութեան ելնելու, և թէ օրինական ձանապարհով երբէք արգելք մը չըպիտի կրէ թերեւս:

Բագուցից գաղթականութիւնը՝ ի Վան ճանապարհելուն, Արժ. աէր Աբգար քահանան կառաջնորդէր նրանց, որ սակայն Բէյալիտէն՝ ի Ռուսիայ վերադառնալ պարտասորեցաւ, առանց Վան գնալ կարենալու. և այդ միայն այն պատճառաւն էր, որ նրա անցագիրը միջազգային օրինաց ուղղութեամբ կատարուած չէր. Թըրքական գեսապանից օրինական վաւերագրութիւնը տեղի ունեցած չէր: Ահա և այդ քահանան Վան գնալ չըկարողացաւ:

Քահանայի մը չենք կարող մեղաղբել երբ նա միջազգային օրինաց անտեղեակ է եղել սակայն ի՞նչ կարելի է ասել այն ինտելեգէնտ և վաճառական անձերին, որոնք նոյն քահանային ձամբելու ամեն հոգը ստանձնելով, միջազգային օրինաց մասին, այդչափ թոյլ կամ անգիտակ եղել են:

Մենք իրաւամբ կալող ենք ասել անգիտակ է Ռուսահայն իւր Թըրքահայի ամեն վիճակին, երբ նրա առևտրական դասակարգն, յարաբերական միջազգային օրինաց հետ միշտ գործ ունեցող վաճառական տարբն, այդչափ անգիտակ է մնացել կարևոր պահանջման մը առջեւ:

Այդ դէպքն ինքնին աննշան է, սակայն շատ աննշան համարուած դէպքերն են, որ ցոյց են տալիս յայանապէս, թէ տակաւին Ռուսահայն իւր Թըրքահայ եղբօր վեճակին բոլորովին անտեղեակ է, նրա տեղական պահանջներին անգիտակ է, որով նա, թէւ մի ազգի զաւակ, մի ընտանիքի անդամ, սակայն և այնպէս հեռաւոր ձարու-

նացիի մը կամ չենացիի մը պէս հեռի է տակաւին իւր զրացի թրքահպատակ եղօր ներքին վիճակին և նրա իսկական պէտքերին ծանօթ լինելուց:

Այդ անգիտակցութիւնն էր, որ գաղթականութեան իրենց դրւոր բերաւ հասցուց, և այսափ անհշան համարուած և կարեորութենէ զրւրկ դատուած խնդիրներն էին մեր կացութիւն օրէօր ծանրացնող և մեր երկաւ կողմի եղայրական անկեղծ սիրոյ արդիւնքն աւելի վնասակար դարձնող:

Վերջին Ռուս թրքական պատերազմից առաջ կարծես չենական պատ մը կար երկու համարիւն եղայրներին մի. մեանցից բաժանող բայց անկէ վերջ շնորհիւ լուսաւորութեան, ամեն յարաբերական միջոցներ բաց էին երկու կողմի հայոց բարոյական մերձեցու մը յառաջ բերելու և երկուստեր միմեանց օգտակար լինելու համար: Սակայն մեր կարծ հասկացողութիւնը, և խակ ինքնագիտակցութիւնը այդ պարագայից մեզ արդիւնքի տեղ վնաս և միմիայն վնաս յառաջ բերաւ, և ով էր վնասողն, դա արդէն յայտնի է:

Սակայն մենք մեր նիւթական և բարոյական անհաշուելի կորուստն ու վնասն չէ որ կուղեմք ակնարկել մենք սիրով կրում ենք մեր ցաւերը, դիանալով հանդերձ թէ ո՞ր կողմից աւելի յառաջ եկած են: Բայց և այնպէս, Ռուսահայ եղայրց մեր վիճակին վրա ունեցած տակաւին յարատեող անգիտակցութիւնը չեմք կարող անտարեր կերպով զիտել: և իրաւամբ պնդում ենք թէ. «Քանի որ միմեանց վիճակին անտեղեակ ենք, միմեանց օգտակար չենք կարող լինել»:

Թվ որ կուզէ թող անտեղեակ մնայ իր անգիտակցութեան մէջ, Ռուսահայոց որ դասակարգն որ կուզէ թող իրեն խեղճ դաշտակարովն մնայ իր միակողմանի տեսութեան մէջ. ստկայն մենք չենք փոփափիր որ այնպէս

լինի և Ռուսահայ լրազրութեան վիճակը, նրա գրագէտ և զարգացած երիտասարդութիւնը, նրա ինտելեգէնցիան, և նրա նոր ու մատաղ սերունդը:

Թերեւ շատերին զարմանք պատճառմն մեր այս խօսքերը և հարցնեն մեզ թէ, «Ե՞ր անգիտակ է եղել թրքահայոց վիճակին Ռուսահայ ինտելեգէնցիան», — մեր կամքից անկախ, այդ հարցման պատասխանելու պատրաստ չեմք:

1898 թւին Ռուս Կառավարութիւնը Բարձրագոյնս կարգադրեց, որ գաղթականներ մի անրպայ ընթացքում իրենց տեղերը վերադառնան: Փախստական խեղճ գաղթականներին մեծ մվիթարութիւն մը եղաւ այս լուրը, նոյնպէս էլ և մատանջութեան մի գլխաւոր կետը:

Մի տարփայ ընթացքում Ռուսահայ լրազրութիւնը հարիւրաւոր էջեր նուիրեց այդ փախստականների վերադառնալուն վրա իր ուրախութիւնը յայտնելով. և յուրօրներ կարգալով:

Քաղաքական օրինաց ազատ արտօնութիւնները կայելող թերթերն, իրենց հանգիստ սրտովն միմիայն վերադառնալու յորփորն էր որ կարգում էին ամեն կողմից յորդորը և միմիայն յորփորը, որ կարծես թէ մի «մօնայ» էր գարձել և շատերին զրելու առատ նիւթ էր տալիս: Այդ պարագան ինքնին ցոյց էր տալիս, որ լրագրութիւնն անգամ, զիտակցաբար կարծես, անտեղեակ վերաբերվում էր դէպի գաղթականների պահանջը: Դա իրեն հաց ու հագուստ չէր պահանջեր, դա իրեն ձանապարհածախս չէր վինառեր, նրա փնտուածը, նրա պահանջը միմիայն: ապահովութեան ինդիրն էր, նա այդ կուզէ լոել: և երբ մազի մը չափ վատահ լինէր իւր յշտին վրա, գլուխը բաց, ոտքը բորիկ, մերկ ու քաղցած, նա վազում, նա թռչում էր դէպ իր հայրենի աւերակները, դէպ իր հրդիկուած, քանզուած ու մախրակոյտ գարձած անակը:

Ահա այս տեսակ պարագայից մէջ լոկ գլուխ ազգտօի: րութիւնը նորէն ապարդիւն և անօգուտ է, չասեմ նոյն իսկ ծաղրելի:

Որուսահայքն ամրող բարի ցանկութեան յշսերով փափտքում էին գաղթականութեան վերադարձին, և ամեն կողմից պատրաստ էին օգնել նրանց, հոգալ նրանց պիտոյքը, և ձանապարհ դնել նրանց յաջող պայմաններով բայց եղաւ մի օրագրող կամ մի հանրային ներկայացուցիչը որ այդ մի տարվայ ընթացքում ջանքն ՚ի գործ դրաւ անձամբ այդ թշուառների հայրենիք գնալու, նրանց վերադառնալէն առաջ իրենց տեղւոյն վրա նրանց իսկական պէտքերը քննելու, և նրանց ապագայի կարենոր պէտքերը՝ իր Որուսահայ եղարց ծանօթացնելու:

Մենք չենք իմացել գոնէ մի այսպիսի ձեռնարկութիւն, կամ գոնէ փորձ. և ահա իրաւունք կունենանք կրկնելու, որ թմրած կղերականութենէն նրա պարագերը պահանջող թէ թլքահայ և թէ Որուսահայ գրողները, միմիայն ջուր են ծեծում, միմիայն գեղեցիկ խօսքերով աղքասիրութեան և անձնութիւնութեան օրինակները զրչեներքեւ բացատրելու ջանքը թափում են ՚ի զուր:

Գործնական ասպարիդի վրա նոյն թմրած, նոյն անտարբեր հասարակութեան անհասներն ենք, որի անդամն է և մեր անտարբեր և թմրած կղերականութիւնը, և մեր մեղքերին հաւասար մեղսակից:

Կղերականութեան յանցանքը նախապէս դատապարտելի է, բայց հասարակութեան զարգացած դասակարգի, ինտելեգէնտ խումբերի, զրագէտ հրապարակախօսների և լրազրերի թոյլ կողմերն արդարացնել չէ կարելի:

Եթէ զարգացման մի ջերմաշափ լինէր մարդոց ուղեղի և դատողութեան զօրութիւն ցոյց տուող անշուշտ կղերից աւելի զարգացման բարձր աստիճանին պիտի հասնէր մեր ներկայ ուսեալ դասակարգերին:

Այս իսկապէս իրասկանութիւն կարելի է համարել սակայն չըլս անգամ աւելի թիւ կազմաղ և մարաւոր բարձր աստիճանին արժանիք ունեցող մեր Որուսահայ ինտելեգէնցիայի որ մեծ գործը, որ մէկ նոր ձեռնարկը իւր համեմատութեան չափով բարձր է թմրած կղերի վիճակից: Ինքնասիրութիւնը մէկ կողմ թօղնենք, և երբ իբրև աղքի մը ցաւին գիտակից զրող մը կուզենք երեխը նախապէս և մեր պարտաճանաչութիւնը քննելու պէտքն ունիմք:

Մենք չենք կարող աւելի յառաջ գնալ մեր փաստերի մէջ քաղաքական պարտաճանաչութիւնը յարգելու պահանջին պէտք է կարեւորութիւն տամք. սակայն մի փաստ յառաջ պիտի բերեմք մեր հրապարակախօսներին ցոյց տալու թէ. «Եթէ իրենք ձեռնհաս չեն մեր յիշած աննշան յարաբերութիւններն անգամ իրագործելու, ուրեմն և կղերն աւելի ես անձեռնհաս է»:

Կղերի յանցանքը շատ է թէ անցեալումն և թէ ներկայիս: Սակայն անցեալն նոյնպէս ցոյց է տալիս կղերականի տուած վնասից ոչ նուազ և մեր հաճյասէր թագաւորների կործանարար թուլութիւնը, իշխանների աւերիչ ամբարտաւանութիւնը, նախարարների ազգակործան անմիաբանութիւնը, և նոյն իսկ վերջին բուռ մը մէլեքների շահասիրական արարմունքը, որոնց միշտ զոհ է գնացել թշուառ հասարակութիւնը:

Խօս հիմա ատանցմէ ոչ մին էլ չունիմք. միայն կղերն է մնացել իրեն հնաւանդ թուլութեան ու թմրութեան մէջ. սակայն միմիայն նրա պակասութիւնով մենք ժողովրդեան զբաղեցնելով, և մեր պակասութիւնները չուղղելով մենք աւ կղերի նման ազգի աչքը կապողը, աղքին իւր թմրութեան ու խօր քնի մէջ պահողը միայն կը. նամեք համարուիլ երբ լրջօրէն քննեմք մերը՝ և միւս աղքերի հանրային գործողների ընթացքը:

Ուսիալ և զարգացած դասակարգի յանցանքը շատ շատ ծանր է արդարութեան նժարին մէջ, և մեր ցաւն այդ է, որ մենք տակաւին չեմք ուղեր թիթեացնել զայն։ Ինքնասիրութեան փասխտը իսոր արմատ է զցել և մեր ինտելիգէնտ դասակարգի արտօւմ, և այդ ախտը անբուժելի է, քանի որ նա զիտակից չէ նոյն իսկ և իր վիճակին։

Մեր հասարակութիւնը իրեն ամեն դասակարգերով միմիայն իւր իրաւունքն է փնտռում, և ոչ մին իւր պարտածանաչութիւնը սիրով յանձն է առնում. ահա այդ է մեզ խարողն. այդ ինքնասիրութիւնն է մեզ զէպի կործանում տանողը. և մեր աչքը փակողը։

Բանանք աչքերնիս և լաւ դիտենք, որ ամեն այն աղգերը, որք ունին պարտածանաչ հասարակութիւն մը, նրանք ունին և հանրային պարտածանաչ կործիչներ։

Ազդը ինքն է, որ պիտի ծնէ և արժանաւոր կղերական, և արժանաւոր հրապարակադիր, և պարտածանաչ սերունդ, և ուղղամբ զրագէտ, և լուրջ քննադաս ու լրազրութիւն։ Սակայն մեր ազդը տակաւին այդ ուժին չէ հասել. նա աղղեցութիւն չունի իւր սերնդեան վրա, հապա ովք պէտք է կատարէ նրա այդ կարեւոր զործը, այդ մեծ և միակ պարտքը։

Մենք երբէք չեմք կատող ապասել որ հոգեորականութիւնն այդ բանին պարտաւոր համարուի ներկայ պայմաններով. վասնղի հոգեւոր դասերին միայն սպասող հաստրակութիւն մը, իբրև ազդը ձանցուելու իրաւունք էլ չունի. Ուրեմն այդ պարտքը վերաբերում է միայն և միայն ուսեալ և զարգացած դասակարգին. աւելի լաւ հասկցնելու համար մեր Ռուսահայ եղարցն, կրկնում ենք նորէն—«ինտելիգէնտ» դասակարգին։

Այս, միմիայն այդ ինտելիգէնտ դասակարգից, թէ այր և թէ ին ուսեալ անձերից, այդ զարգացած մոքերից

կարելի է ազանել մեր մասւոր բարւոքման գործն յառաջ աանելու մեծ պարտքը, որ իսկապէս պիտի բարւոքէ և մեր հասարակային վերքերի վիճակը։

Քանի որ մենք մտաւոր զարգացման ընդունակ և սիրահար հասարակութիւն մը չունիմք, չեմք կարող ազատութիւն մեր ախտերից. և քանի որ մեր հասարակութիւնը ախտաւոր է, նոյնպէս և ախտաւոր են նրա հանրային ամեն գործիչները. ուրեմն և ախտաւոր զործիչներից չեմք կարող սպասիլ առողջ և ժիր մարդոց յատուկ գործեր. ուրեմն և նրանք չեն կարող լինիլ և կատարեալ պարտածանաչ թող որ կղեր լինին, թող որ հրապարակադիր լինին, կամ նոյն իսկ թող որ շատ և շատ ուսումներով և զիտութիւններով իրենց ուղեղը լեցրած մարդիկ լինին։

Սակայն երբ մենք յոյս ունիմք միմիայն զարգացած և ինտելիգէնտ դասակարգին վրա, ուրեմն նախ և առաջ նրա բարւոքման, նրա կատարեալ պարտածանաչ լինելուն վրա պէտք է յոյս դնեմք. և ուր որ յոյս ունիմք այն տեղից միայն պահանջելու իրաւունք ունիմք։

Թէ մի ակնարկ նետենք մեր Ռուսահայ ինսելիգէնցիայի նորասիրութեան ծայրացեղ ընթացքի և օտարամոլութեան տխուր կողմերի վրա, արդարանալու ոչ մի պատճառ չեմք տեսներ նրա զործերի մէջ, որ զոնէ մի քիչ միմիթարական երևոյթ ունենար։

Ռուսահայոց այդ թարմ ուժերն աւելի շատ ենթակայ են այդ օտարամոլութեան ծիւրախախն, քան թէ Թըրահայոց երիտասարդութիւնը։

Ռուսական հաւասարասէր օրինաց ներկա մի և նոյն ուսումն, մի և նոյն զարգացումն ունեցող հարիւրաւոր համալսարանականներից, միաւորներն են որ իրենց կոչման հաւատարիմ մնում են և հաւատարմաբար կատարում են իրենց պարտքերը գէպի մարդիկ, գէպի Տէրութիւնը և գէպի աղգը։

Եւրոպական բարձր կրթութիւն առնողներից շատ քչերն են, որ հասարակութեան ծառայելու ձգտում կունենան. և իրենց ստացած պարագերը վերադարձնում են նոյն հասարակութեան, որմէ ստացած են իրենց յառաջդիմելու ամեն միջոցները:

Էլ ուրեմն ինչու մեղագրում ենք միւս այն դասակարգերը, այն անձերը, որոնց եթէ թողնելու լինենք մեր մտաւոր զարգացման և ազգային յառաջդիմութեան յոյսը, արդէն ինքնին մենք մեղ կըդատապարտեմք. և նոյն իսկ մեր մարդկային արժանապատութեան դէմ կամաւ մեղանցում ենք, և մենք մեր ձեռքով մեղ պատժում ենք խիստ ծանր կերպով:

Ուրեմն մենք էլ թողնենք կղերին էլ անտարբեր դասերին էլ որ նրանք փակվին իրենց գաղափարների մէջ, և մենք մեր պահանջները յայտնեմք մեր սիրելի Ռուսահայ զարգացած դասուն, մանաւանդ լրագրութեան:

Թըքահայ լրագրութենէն մեր մասնաւոր պահանջները միայն ունիմք, վասնզի ի՞նչ քաղաքականութեան մէջ է նա, պէտք է 'ի նկատի ունենամք. եթէ աւելին պահանջնեմք, ինչ որ Ռուսահայ լրագրութենէն աւելի կարող եմք պահանջել դա կըլինէր ուսենիից խնձոր պահանջել. մինչդեռ Ռուսահայ լրագրութենէն պահանջներով, լիայոյս եմք, որ խնձորը խնձորէնիից ենք պահանջում:

Ահա թէ ի՞նչ ենք պահանջում յանուն Ռուսահայ լրագրութեան ամբողջ Ռուսահայոց ինաելեզէնա և ուսեալ և զարգացած և կարող դասակարգերից:

Նախապէս յայտնում ենք, որ Ռուսահայն, գաղթականների վերադառնալուց կամ 'ի Ռուսիայ մնալու անորոշ խնդրէն ըլպէտք է նեղուի: Արդէն Ռուս կառավարութեան մարդասէր ջանքերը տիսանք, նոյնպէս և գաղթականներին սահմանից կրկին անդամ՝ 'ի Ռուսիայ վերադառնելէն յետոյ, այդ հզօր ազգից կրկին մարդակարգերու-

թեամբ գաղթականներին իր սահմաններում մնալու արտօնութիւն էլ լսեցինք: Այժմ մեղ մնաւմ է խնդրել որ Ռուսահայն այնպէս ըլվերաբերլի դէպի գաղթականութիւն, ինչպէս որ վերաբերուեց նախապէս:

Թէ վատնուին միլիօնաւոր բուրլիներ, թէ զոհուին նորէն աղնիւ ջանքեր, գաղթականներին հաց տալու համար, ամենն էլ ապարդիւն կանցնեն, ապարդիւն կանցնեն նոյնպէս ամեն լրագրական յորդորները, երբ միայն զրելով ցոյց տալ կուզեն նոր օւղղութիւնները:

Գործնական մարդուն յատուկ միջոցները չեն պահսկիր իրեն հացը ճարելու համար. և գործելու կարող անձերին փոխանակ մերկութիւնը ծածկելու, կամ մի քանի օրվայ ապրուստ տալու, գործը տալու է գործ. ձրի հացը ամեն ատեն մարդուն ըրկշատցներ:

Գործը, կրկնում ենք շեշտելով վասնզի նոյն իսկ գործերի շատ մասնաձիւղեր ունեցող հարուստ վաճառականներին էլ գործարանատէրերն էլ աւելի լաւ համարեցին քանի մը բուրլիները շպրտել զիմողին, քան թէ գործի դիւրութիւնները տալ, որ աւելի պատաւաբեր միջոց կրնար լինիր:

Ռուսահայ հասարակութիւնը բաւական գումար մը զոհեց գաղթականների օգտին, և նոյն իսկ մասնաւոր նպաստների գումարը պատկառելի թիւ մը գոյացնում էր. սակայն ուր է արդիւնքը. որ գաղթականը այսօր այդ գումարի արդիւնքէն օգտվում է տակաւին գործի մարդ լինելու համար:

Վանի մէջ տմերիկուհի մը մի ամբողջ տարի, թերես ալ աւելի, նպաստ և գործ պատուաւոր միացմամբ իրարու լծեց: Գործել կարողացողը՝ ստացաւ իր վարձքը, նրանով իր ընաանիքն էլ կառավարեց. և աշխատողների գործի արդիւնքից՝ անկարողներն էլ իրենց ապրելու միջոց կունենային:

Միսիօնարուհին օգնութիւնն իւր բարոյական բարձր ըստթեան վրա պահեց, որով ոչ օգնողն ամբարտաւան հպարտութիւն մը զգաց այդ գործէն, և ոչ էլ գործից օգտվողն նուաստութեան էնթարկեցաւ:

Ահա ամբողջ Ռուսահայոց կարող կամ անկարող դաստիարգի ցրված նպաստները տամնապատիկ առելի գումար մը զցացնում էին ամերիկացի օրիորդի մը ձեռքը զտնուած զումարէն, որմով նա հազարի մօտ մարդիկ գոհայուց գործնական օրինակելի ճանբով, սակայն Խուսահայոց որ քաղաքում կտմ որ տեղ յանուն գաղթականութեան մի գործարան, մի արուեստանոց կամ մի հաստատութիւն հիմնուեցաւ օրինաց բարձրագոյն հաստատութեամբ, որպէսզի քանի որ գաղթականներ մնալու լինէին, նրանցից զոնէ հարիւր տնձ, այդ օրինակելի գործին մէջ պատուաւոր հաց ձարել կարենար:

Մենք ցաւելով կատենք, որ շատ գործունեայ և ժիր երիտասարդներ, որք անշուշտ Ռուսաստանի թէ լեզուին, թէ սովորութիւններին անծանօթ էին, իրենց նախնական փոքրիկ սխալներով փոխանակ կարեկցութեան, զայրոյթ միայն հրաւիրեցին իրենց վրա և զրկուեցան գործից:

Այդ զայրացողն աւելի ինտելեգէնսա դասակարգն էր որ աւելի շատ սիրող լինելով օտար լեզուների, իրենց շատ ծանր թուեց գաղթականի մը իւր լեզուն ըշհասկանալն: Նա իւր կարծեաց մէջ իրեւ անսխալ մը, սո չափ խղճալի մտածում միայն ունէր, թէ «այն որ իւր լեզուն ըշհասկանը և դործի չէ կարող ծառայել:»

Սակայն լուրջ բարերարներ շատ կան նորէն, որք կարող են հաստատել թէ «անվարժ և անկեզու գաղթական մը կարող է նորէն շռատով սովորել եթէ սովորեցնող կամքեր գտնուին, և ահա այն տաեն նա գործի մարդ է:»

Շատ և շատ դրամատէրեր աւելի ևս զիւրաւ կարող էին գործնական զոնէ փոքրիկ ձեռնարկներ սկսել յօ-

գուտ գաղթականին, զիւրամնաւեսական նոյն իսկ ընդուրը ձակ ասպարէզ բանալի ուլի հազարաւոր կին ու հարսներ, օրինակ ու պատանիք գործ կարող էին գտնել սակայն այդ աեսակ գործերից ոչ մին չփորձեց Ռուսահայ վրամատէրն, միայն հարիւրաւոր րուբլիները շպրտել մեծ գործ մը և մեծ բարիք մը համարեց. և այդ միակ պատճառաւ ձրիակերութիւնն ինքնին քաջալերուեցաւ:

Մենք դատելով դատապարտում ենք այն գաղթականներին, որք գործելու ամեն կարողութիւն ունենալով հանգելձ, ձեռք պարզեցին ողորմութեան դռներին, և այդ ընթացքով թուլացան գործի մէջ:

Մենք ցաւելով տեսանք, որ շատ գաղթական երիտասարդներ սխալման կամ անհաւասարմութեան օրինակներ ցոյց տվին, և զրանով զերենք բարերարողներին վշտացրին:

Բայց նրանց սխալովն սխալվում էր և այն Խուսահայն, որ չեր կարող գատել որ «անազնիւ մարդ ամեն տեղ գտնվում է:» այլ նա իրեն նոր արամաբանութիւնն էր կրկնում թէ «գաղթական չէք, էլէ: կոտորվելու արժանի էիք:»

Ես լսել եմ հայհցանքներ, ոչ, Ասառւած իմ, ի՞նչ հայհցանքներ, զոր Ռուսահայ մը թափում էր իրեն Ռուսահայ եղբարց զլսին, որք գաղթականներին նպաստում և օգնում էին: Այդ խղճալի օրինակին նոյն իսկ և քեչ շատ խելահաս անձինք էլ հետեւզներ տեսած եմ, սակայն երբէք չեմ կարող ասել թէ «զրանք ներկայացնում են Ռուսահայ հասարակութիւնը:» Այդպիսիք և սխալվող և անաղնիւ գաղթականի տեսակին են վերաբերվում:

Մենք միմիայն ցաւում ենք, որ ողորմութեան հաց մերժող գործ փնտուղ անձնուէր երիտասարդները, ուր որ զիմեցին, սառն արհամարհանքի հանգիպեցան. իսկ այն, որ վարժվեցաւ զրամական նպաստ ինդրելու, ստա-

յաւ քիչ շատ ուր որ զիմեց. և այդ գաղթականի օրինակին հետեւցան և կարգ մը նոյն իսկ Ռուսահայ ծոյլ երիտասարդներ: Դրանք միշտ քանի մը բուրլիներ նուէր ստանալով, փառաւոր գործ մը դատան իրենց համար:

Սակայն նրանց չափովն էլ ես յանցաւօր եմ համարում այն դրամատէրը, որ գործի դիւրութիւններն ունենալով հանդերձ, մերժեց գործ տալ գործ վնասող գաղթականին, բայց դրամ խնդրողին դրամ տալ յօժարեցաւ: Ի հարկէ գործելու կարող անձերին գործի տեղ դրամ տալ միայն իրր հայրի մը դին, երբ նա զայն չուզեր, ձրիակերութիւն քաջալերող մի ձանապարհ է բաց անում, և մենք այդ աւելի տեսանք Ռուսահայոց կողմից. և փափռում ենք, որ փախանակ այդ կերպին, մի նոր կերպ և ուղղութիւն մը ձեռք առնեն, գործնականապէս և իրապէս գաղթականներին օդնելու համար աւելի բարոյական սկզբունքով:

Թերես բաղզը մեզ տակաւին շատ պիտի հալածէ. թերես շատ երկար տարիներ պիտի թափառեմք օտարութեան մէջ. մենք կարող ենք տանել մեր ցաւերը, ստկայն մեր մատաղ մանուկներին...

Ահա սկսեց նոր դարը, այն դարը, որ քսաներորդ թւոյն հետ մեզ խոսանում էր խաղաղ և մարդավայել կեանք. սակայն դա զրկեց մեզ նոյն իսկ և մեր աննախանձել վիճակից և թշուառների թշուառագոյնն արաւ մեզ: Քաղաքականութեան կամ Ճակատագրի հարուածները կտմոյ ակամայ պիտի կրենք սկրով:

Սակայն երբ գաղթական մը արշալոյսին վեր ելնելով, ցուրտ հողին վրա անօթի և կիսամեռ. վիճակի մէջ թմրած կին ու երեխաները թողնելով մի մութ անկիւնում, դուրս է վազում, գործի համար զոնէ զուռը ման գալու: Ո՞հ, սակայն նա պարտապ ու ձեռնունայն մութ զիշերուան հետ իւր գժրադդ երեխայոց մօտ պիտի դառնայ:

Նրա ոտքը յառաջ չըգնար, արդեօք նրանց ողջ թէ մեռած պիտի տեսնէ սովի ճիրանների մէջ, նրանց վերջին դառն ու անօթի վիճակից նուազած թարմ կեանքի վերջին օրհասական հասալանքները պիտի լսէ, թէ դառնազին աղաղակը, որով հաց հաց են խնդրում: Այս, մեր ոտքն էլ յառաջ չըգնար ներս մտնելու և նրանց դառն վիճակը տեսնելու: Այս վիճակին պէս դառն է պատուախնդիր զաղթականին ողօրմութեան հաց մուրալը: Նա սիրով մտնում է իւր գժրադդ զաւակների սովամահ դիակները վերցնելու, և առանց Ռուսահայ քահանային նեղութիւն տալու, ինքն ուղում է տանել իւր սիրելին հողին յանձնելու: Նա այդ գերեզմանի վրա նստած, կամ իւր ձեռքի արդիւնքով իւր հացը գտնելու մի յցս է վինտուում: և կամ մոհ:

Ահա այսպիսիններն էլ կան գաղթականների մէջ. և մենք Ռուսահայոց ուշաղրութիւնը հրաւիրում ենք, որ նոր գարուս մէջ նոր ուղղութիւն մը տան իրենց նըպաստներին, և փոխանակ աջ ու ահեակ ցրուելու, որ աննպատակ կերպով սպառվում է, թող փորձէն գործնական միջոցները բանալ և գործի ասպարէզ ընդլայնել գաղթականի գործող դասակարգերին:

Իսկ Ռուսահայ ինտելիգէնտ դասակարգին աւելի մեծ գործ կայ կատարելու, եթէ դրամատէրն նիւթականով կարող է օգնել զարգացած դասակարգն էլ բարոյապէս կարող է օգնել:

Գոնէ իւրեւ իրենց բարի ցանկութեան մի ապացոյց, Ռուսահայ երիտասարդութիւն թող ձեռք զարնէ գաղթական երեխաներին բարոյական սնունդ տալու, ուսումնական տալու, կրթութիւն տալու:

Թողնենք բարեգործական ընկերութիւնները, զարգացած դասակարգն ամեն քաղաքում իւր կարողութեան չափովն տասն, քսան երեխայք դաստիարակելու համար կարող է միջոցներ գտնել:

Գալով ընդհանուր նպատակով մեծ զործ մը կատարելու մասին, շատ զժուար չէ Ոռւսահայոց նոր հիմնարկութիւն մը հաստատել յանուն Թբքահպատակ երեխայոց, որի համար հաւաքված դրամագլխով մը, Բարձրագոյն հրամանաւ, կեղրոնական քաղաքի մը մէջ, ուսումնարանական վարչութեան հսկողութեան ներքեւ նէ հարիւր գաղթական երեխայ կրթելու և սուցանելու չափ կարողութիւն մը կարող են ցոյց տալ:

Բարեսէրներն իրենց նուերներով, կտակակատարներն իրենց կտակներով կարող են այդ զրամագլուխը ձևխացնել, և այդպիսով, չասեմ հարիւրից աւելի, գոնէ հարիւր երեխայ ապահով կրթութեան մը հասած կրլինին:

Եթէ նոյն իսկ գաղթականները վերագառնան, այդ հաստատութիւնը կարող է շարունակվել. և նոյն իսկ ընթացաւարանների տեղ կարելի է նորէն Թիւրքիայից որբեր կամ ընդունակ երեխաններ բերել ու կրթել: Առուսական Վարչութիւնը իւր ծրագրի մէջ՝ ի հարկէ ազատամիտ սկզբունքով մը մնանում է և Թբքահայ երեխայի համար թէ հայ և թէ թիւրք լեզուները, որով կրթուած երեխան իւր ուսումն սուանալէն վերջ, իւրեւ գործնական մարդ մը իւր հայրենիքը կրվերագառնայ, և իւր երկրի տիրող լեզուին, և իւր մայրենի լեզուին իւրեւ լրացնող պսակ մը, կունենայ նաև ուսուսական լեզուն ու կրթութիւնը:

Առուսական զրացի քաղաքակրթութիւնը այդպիսով աւելի շատ հեշտ մտնում է Թբքահայաստան, ուր եւրոպական լեզուներն աւելի քաղուց մուտ դտել են իրենց քաղաքակրթիչ բնաւորութեան հետ. ինչու և ուսուսական զրացի հզօր պետութեան լեզուն ու քաղաքակրթութիւնը ետ մեայ այնտեղից:

Ահա, Ոռւսահայ ինտելեգէնցիան, ամբողջ Ոռւսահայոց չասեմ, այլ միմիսյն իւր ջանքերովն, գոնէ հարիւր տղայոց ուսումնարան հաստատելու ամեն դիւլութիւններն

ունի. և զրտնով մեծ ապագայ կըստարասահ հարիւրաւոր գմբաղդ երեխայոց, որք յաջորդագրար աւարաելով իրենց ուսման ընթացքը, քանի մը տարիներից վերջ հազարների կըհանեն, որք աւելի և աւելի երախտապարտ պիտի մնան Ոռւսահային:

Եւրոպացին, կտմ ամերիկացին հեռաւոր երկրները չափեց, ծով ու ցամաքներից անցաւ, հասաւ Պարսկաստան կամ Թբքահայաստան. բացաւ ուսումնարաններ, որբանոցներ. սակայն Ոռւսահայ ինտելեգէնցիան իւր երկրում, իւր ձեռքին տակ, իւր աչքին առջև տեսաւ ու շօշափեց մեր վերքերը, բայց սոյն տեսակ հաստատութիւնների ձեռք չուզեց պարզել. և այդպիսով ոչնչացաւ և միշտ պիտի ՚ի զուր վատնուի ամեն այն մասնաւոր նպաստները, որք առօրեայ վեշտ մը միայն կրնան թեթևացնել:

Ո՞ր լրագրութիւնը, ո՞ր հրապարակախօսն հրաւեր կարգաց հայ թիւրթերում, և Ոռւսահայոց կողմից մի սոյն տեսակ ուսումնարան կամ արուեստանոց Ոռւսաստանում հաստատելու ջանքը թափեց և լըյաջողեցաւ:

Մենք լիայցս եմք, որ հայ բարեսէրները բաւական նպաստներ պիտի յատկացնէին Ոռւսական Կայսրութեան մէջ հաստատուած հայ-ուսուսական որբանոցի մը համար: Ինչպէս որ հայերը իրենց քաղաքային հաստատութեանց օգտին և բարցական հաստատութիւններին չեն խնայիր իրենց կտակները, որմէ կօգտվին թէ ուսուն, թէ վրացին, թէ հայն, մենք կրնանք յուսաւ որ օտարներն էլ նոյն մարդասէր ոգովն հայ-ուսուսական որբանոցի մը պիտի նպաստէին, և Թբքահայն պիտի ունենար իւր որբ զաւակների համար և մի պատուաւոր ապաստանարան, ուր գոնէ քիչ թւով, սակայն կանոնաւոր զարգացման պիտի հասնէին աւարտողներից շատերը:

Երբէք զժուարին չեր այս Ոռւսահային, բայց ցարդ նու չարեց այդ փորձը: Նոյնպէս էլ Թբքահայաստանում

օտարների այսչափ ձեռնարկութեանց կարգին Ոռւսահայք ընդհանութ մասնակցութիւն մը չունեցան ուղղակի իրենց կողմից. սակայն տակաւին հաւատացնում ենք հասարակութեան, թէ ինտելիգէնցիաներ եմք:

Մենք այստեղ մեր խորին յարգանքը և հիացումը որչափ որ յայտնենք առ պ. Գ. Զանշեան, չնմք կարող ամբողջապէս մեր սրտի զգացումները յայտնած լինել: Նորին Ազնւութեան ձեռնարկած մեծ գործն արդէն ինքնին ցոյց է տալիս իւր բարձրութիւնը, այլ ևս մեզ ոչնչէ կը մնայ ասելու. այլ միմիայն մեր խորին երախտազիտութիւնը հրապարակաւ յայտնելով «Եղբայրական օգնութիւն մնասուած Թիւքահայերին» անուն կրող պատուական գործի մը հեղինակին, աւելացնում ենք թէ, միմիայն այդպիսի գործն է, որ խսկական փառք և պատիւ է յաւերժացնում և ապագային կանոնաւոր արդիւնք է խոստանում, երբ յարատե լինի:

Ոռւսահայք իրաւամբ կարող են օրինակել այդ մեծ գործը, որի շնորհիւ հաստատուած հայ-ոռւսական որբանոցներն, Թիւքահայաստանում վայելելով Ոռւսական Բարձր աղղեցութեան հովանաւորութիւնը, Ազգային Վարչութեան հսկողութեան ներքե, օտար որբանոցներից աւելի արդիւնաւոր կարող են լինել ազգին: Զուտ ազգայնական ոգուով կրթուելէն վերջ, եւրոպական քաղաքակրթութեան ծանօթանալու պատրաստվելով այդ հայ որբերն, Ոռւսական հզօր կայսրութեան էլ և իրենց աերութեանն էլ, արժանաւոր երախտագէներ կրնան լինել:

Ոռւսահայ ինտելիգէնցիան քանի՞ օրինակներ ցոյց տվել է պ. Զանշեանի հետեւողութեամբն: Կարծեմք թէ պատասխանն գոհաչուցիչ չէ, քանի որ ապացոյն ինքնին փայլում է, և թէ կարող է հաստատել որ սղյն տեսակ մարզասիրական և աղբասիրական գործեր շատ կային, և Թուսահայն կարող էր ձեռնարկել մի քանի այդպիսի

բարցյական հիմնարկութիւններ Թիւքահայաստանի մէջ խեղջ և թշուառ եղանակար լինելու, և շնորհիւ Ոռւսական բարձր աղղեցութեան իւր այդ ձեռնարկը օրինակելի և նախանձելի ապահովութեան հասցնելու:

Մեր մասնաւոր գրութիւնները, մեր հրատարակութիւնները ապարդիւն պիտի մնան միշտ, եթէ խօսքի գոնէ մէկ տասնաներորդը՝ գործնական միջոցներով գրազների արժանիքը չըբարձրացնեն: Ոռւսահայ լրագրութիւնը հասարակային խնդրոց վրա միշտ գրում, միշտ խասում, միշտ քննադատում է, գա իրեն խսկական պաշտօնն է. սակայն գրողի մը, և զրչէն գործի անցնելու արգելք մը չըկրնար լինել եթէ ինքն իւր գրածը իրական փաստերով հաստատելու ստուգութիւններն ունի:

Սյս կերպով Ոռւսահայ գրողն, որ գործելու էլ պարաւոր է իւր բարցյական պարտքերովն, կղերականից ոչ նուազ յանցաւոր է. յանցաւոր է և հասարակութիւնը, որի ամբողջական առողջութենէն միայն պիտի ծնեն առողջ և պարագանաւ հանրային պաշտօնեաներ:

Թոյլ և տկար կազմուածքի մը ծնունդն պիտի ունենայ անշուշտ և իւր թոյլ ու տկար կողմերը:

Թիւքահայոց մի առած շատ սաղ է գալիս մեր հոգեորականութեանն էլ և նրան քննադատող հասարակութեանն էլ որ երրորդ մը կարող է տալ երկու հակառակորդների ճակտին. «Ոչ գու ինոր ասա Ալօ. ոչ էլ էն քեզ ասի Բլօ»:

Սակայն մեր վստահութիւնն այնչափ շատ է Ռուսահայ հասարակութեան վրա, որ իրեն ուղղում ենք մեր փափքները, մեր յարգանքը և մեր յանդնութիւնները, որ միմիայն յառաջ է գալիս մեր անկեղծ սրտից, որով փափքում ենք Ռուսահային տեսնել իրեն արժանաւոր բարձրութեան վրա, իրեն կատարեալ պարտագանաչութեան շաւղին մէջ, և իւր Թիւքահայ եղբայր նկատմամբ, նրանց բարցյապէս օգնելու գործերի մէջ:

Անցնում, հեռանում է 19-երորդ դարը՝ յաջորդում  
է նորն; Քսաներորդ դարն թող մի խթան լինի Ռուսա-  
հայ եղբարց և իրեն ինտելեկտիային, որ թօթափեն ի-  
րենց միակողմանի մտածութերը, և նոր զարուս հետ իրենց  
թշուառ Թրքահայ եղբարց բարոյական նոր ուղղութիւ-  
նով մը մօտենալու, նրա վերքերը իրենց ձեռքով շօշափե-  
լու, օգնելու, և մտաւոր մնունդ տալու, բարոյական պար-  
տածանաչութիւն մը կատարելու ձեռնարկներ անեն:

Եթէ ցարդ եղած մասնաւոր և անձուկ գաղափարով մը,  
Թրքահայի իսկական պահանջներին առանց ծանօթանաւ-  
լու նոյնանման եղած օգնութիւններով բաւականութիւն  
զգան, 'ի զուր կանցնին իրենց ամեն զոհողութիւնները,  
'ի զուր կրվատնուին և աղնիւ ջանքերը, 'ի զուր կրթա-  
փուին և դառն աշխատութեան դիմողների քրամնքը.  
մենք նոյն ենք և նոյն պիտի մնամք:

Եթէ հայն նիւթական հայի հետ և մտաւոր մնունդ  
չըդտնէ, 'ի զուր է և նրա անամսնական կեանքը:

Ահա ուրեմն Ռուսահային միակ և իսկական պարտքն  
է առաւել ևս Թրքահայ եղբօրն բարոյականին՝ այն է  
մտաւոր մնողեան հոգ տանելը, իւր կարողութեան չա-  
փովն իւր ջանքը չըխնայելով։ Առաջին պարտավանու-  
թիւնը Ռուսահայի ինտելեկտիային է վերաբերում, որին  
մի փառաւոր օրինակ ցցյց տալու բաղդն ունեցանք յան-  
ձին պ. Զանշեանի. և ահա կրկին զիմում ենք նոյն օրի-  
նակին և խնդրում ենք մեր Ռուսահայ եղբարց լարգացած  
դասակարգէն, որ ինքն իւր ուշադրութիւնը չըդարձնէ  
ծոյլ կղերին կամ անտարբեր հասարակութեան, այլ ինքն  
միմիայն իւր պարտուց գործադրութեան խղճի մտօք հե-  
տեիլ սկսէ, և ահա այն ատեն յուսալի է, որ թոյլերն  
ու անտարբերներն էլ կուզզվին:

Թրքահայաստանում բազմաթիւ թշուառ որբերը մը-  
նում են անտէր և անտիրական. օտար ձեռքերը որչափ

որ կըպատսողարեն զանոնք, մէկ տասներորդին չեն կարող  
բաւականանալ. Օ՞ն, ուրեմն և Ռուսահայ ինտելեկտիան  
թող իւր բարոյական բաժինն ունենայ Թրքահայաստա-  
նում, իրեն ջանքիրովն և իրեն նպաստներով որբանոց-  
ներ բանալու։ Ռուսական հզօր աղդեցութեան շնորհիւն  
նրանց ապահովութիւնն անկասկած լինելով նոյն իսկ  
Ռուսահայոց որբերին էլ մի աեղջ մի ուտումնարան կա-  
րող է պատրաստած լինել ուր երկու տէրութեանց հպա-  
տակ գժեաղդ որբիկները, ձեռք ձեռքի տուած, թող  
կրթուին բարոյական պարտաճանաչութեան և քաղաքա-  
կրթութեան պայմաններով։ Յշղպիսի որբերից զուրս պիտի  
գտն երկու տէրութեանցն էլ հաւատարիմ հպատակներ,  
և ազգին կատարեալ անդամներ, աղդային սուրբ և ան-  
խառն զգացմամբ։

Օտար ամերիկացին և գերմանացին հետաքրքրվում է  
հայի որբերովն. նա իւր հեռաւոր սահմաններից, թողնե-  
լով իւր փափուկ կեանքը, զաղթականների թողած ամայի  
կրկներում, ծանր և աննպաստաւոր և նոյն իսկ վտան-  
գաւոր ձանապարհները կտրում, անցնում է զէպի հայ-  
կական թշուառութեան կեղսանները, որպէսզի իսկապէս  
քննէ և հասկանայ իւր բարոյական գործի նշանակու-  
թիւնը։

Սակայն ցաւելով ատում ենք կրկին, որ Ռուսահայ  
լըագրութեանց ոչ մի ներկայացուցիչ ոչ մի մասնաւոր  
ինտելեկտուս հետաքրքիր մը չըդտնուեցաւ, որ յանձն առ-  
նէր այդ ծանրութիւնը։ Ծանր բեռներ այլոց վերցնելու  
հաճոյքին մէջ, մատը տալու ծանրութիւնն էլ չըւղե-  
ցինք կրել։

Եթէ եղան մեր կարծեաց հակառակին այդպիսի ծան-  
րութիւն կրողները, ևս չեմ գիտեր, ի՞նչ անուն տամք  
այդպիսիներին, որոնց արդիւնքը իրենց աշխատութիւնն  
իսկ չըվարձատարեց։ Փորձէ մը, և նրա առթիւ եղած ան-

զիտակից և անտեղեակ պայմաններից խարուելէն վերջ նոյնանման կրկնութիւնից միմիայն իրական վտանգն է գալիս:

Մեր ինաելիքէնցիայի թէ պարաքերը, և թէ կատարած կամ կատարելիքները լիովին յառաջ բերելու կարողութիւնը չունիմ ես քաղաքականապէս, այլ միայն պիտի սահմանափակեմ խօսքս յայտնելով, թէ ի՞նչ էր մեր յիշած վտանգը: Ազատամիտ հայեացքները կրօնքի պարզ հաւատքը ջախջախելով միամիտ Թրքահայի սրտում, նրա տեղը ըզդին իսկական պաշտամոնք մը, և այդ վտանգն էր, որ յառաջ բերաւ մեծ կորուստները, որին միշտ զոհ է գնում ուսման կարօտ մնացած հայ մատաղ սերունդն իւր անմեղ կեանքովն:

Մեր ներքին զարգացման անտեղեակ վարժապետացուներն զանազան տեղերից բերելով նոր զգացումներ, առանց երոպական բարձր բարցյականին, միմիայն շարժուն կմահք մը հայ նորափթիթ մանկան առջև զրին, որմէ յառաջ եկաւ զդուանք և ունեցաւ իւր գէշ հետեանքը:

Մեր փափաքն է, որ Ռուսահայն իւր ամեն ջանքը թափէ միմիայն մեզ — Թրքահայոց մտաւոր օպնութեան բարցյական գործով մը նպաստելու, որով իւր պարտուց զլսաւորն կատարած կը լինի:

Իսկ Ռուսահայ գրամատէրերն աւելի ևս պարտք ունին այդ գործին ուժ տալու, և իրենց նիւթական կարողութիւնը բարցյական գործերով փայլեցնելու:

Եզրպիսիներին էլ մի փառաւոր հաստատութիւնը, այն է Կարնի Սանասարեան Վարժարանը կարող եմք մատնացոյց անել որ իւր տեսակին մէջ Ռուսահայոց կողմից եղած առաջին և անդրանիկ ձեռնարկն է, և որ յաւերժական մի փառք է հիմնադրի անմահ անուանն:

Միթէ Ռուսահայոց մէջ Սանասարեանից աւելի դրամատէրերը չեն գտնուում. սակայն բարցյական անուն մը

նիւթականով բարձրացնել ուզող կամքեր շատ քիչ են երեսում:

«Եղբայրական օգնութեան» հեղինակութեամբ բայուած հայ - ռուսական որբանոյների և Սանասարեանի Կարնոյ Վարժարանի օրինակներն և ռուսական բարձր աղղեցութեան շնորհիւնոցա ապահով վիճակը, կարծեմք թէ բաւական ապացոյց են Ռուսահայ ինաելիքէնտ և հարուստ դասակարգին համար համար, թէ Ռուսահայոց այս տեսակ բարոյական ձեռնարկութիւններն աւելի շատ ապահով և արդիւնաւոր ապագայ ունին, քան թէ Թրքահայոց և կամ նրանց միացեալ ընկերութեանց նման հասարակային ջանքերով հաստատուած դպրոցները:

Ֆրանսիական կամ անգլիական կամ գերմանական լեզուներն իրենց աղղեցութիւնը՝ 'ի Թիւրքիայ տարածելու ջանք են անում' ինչու և Ռուսահայ ինաելիքէնցիան Թիւրքահայաստանին զրացի ռուս կայսրութեան լեզուն և նրա քաղաքակրթիչ աղղեցութիւնը հոն տարածելուն միջոց մը ըլլինի:

Եթէ քաղաքական դժուարութիւնները մեզ օրինակ բերուին իրը արգելք, մենք կասենք, որ այդ օրինակովն միմիայն եկեղեցականներն թող զինուին, իսկ մեր զարգայած գասակարգին ամօթ է բերում մի այդպիսի օրինակ, քանի որ մենք լաւ դիտենք թէ միջազգային խաղաղասէր օրինաց առջև հաւասար կերպով պիտի յարզվին թէ ֆրանսահայտակ ձիգվիթի և թէ ռուսահայտակ հայի, կամ ամերիկայի և գերմանացի գօքթօրի մը բարեսիրական ձեռնարկները, որք բարցյական դերը միայն ունին՝ 'ի նկատի:

Երդէն մեր փափաքն է, որ Ռուսահայն այդ նոր ուզգութիւնն ի՛նկատի ունենայ և բարցյական կերպով իւր Թրքահայ եղբօր կեանքին մօտենայ, իւր նիւթական օգնութեամբ նման մտաւոր մնունդ տալու նորանոր միջոցներ ստեղծէ բարցյական հաստատութիւններով:

Ռուսահայն փոխանակ գաղթականի իւր տեղը վերադառնալուց մի արդիւնք սպասելու, իւր օգնութիւնը Թիւրքահայաստանում գտնուած դժբաղդ որբերին ևս թող նուիրէ:

Թրքահայոց այս ծանր ու աղէտալի վիճակին մէջ ուր թէ հացի և թէ ուսման սով կայ, աւելի նախընտրելի է մեզ համար, որ Ռուսահայ ինտելիգէնցիան էլ ուսման սովը թեթևայնելու հոգը թող ստանձնէ գոնէ:

Գաղթականութիւնը թէ մնայ ՚ի Ռուսիայ և թէ դառնայ իւր տեղը, ոչ նրանով եղած կորուստները դարմանվում են և ոչ էլ մի արդիւնք յառաջ գալիս է նրանց վերադարձն: Սակայն Ռուսահայի մտաւոր և բարոյական ազգեցութիւնը Թիւրքահայոց մէջ տարածելն իրեն փառաւոր արդիւնքն պիտի ունենայ, որ երկուստեղ ևս յառաջ պիտի բերէ միմեանց լաւ ծանաչելու և միմեանց իսկապէս օգտակար լինելու անկեղծ բաղձանքները, եղբայրասիրական կատարեալ գիտակցութիւնը և սէրը. մինչ դեռ ցարդ միմեանց իբրև խորթ եղբայր եղել են կարծեա:

Ռուսահայոց առեւտրական դասակարգն աւելի ևս յաջող միջոցներ կրնայ գտնել մեր երկու կողմի հայոց մտաւոր զարգացման միջոց զառնալու, միմիայն իւր առեւտրական ձեռնարկներն:

Բագույի միլիօնատէրերն Թիւրքահայաստանի ամեն կողմերն, ուր որ նաւթահանքերն իրենց կուսական զրութեան մէջ մնում են տակաւին, քանի մը գործարաններ կարող են ունենալ:

Հանրօգուտ այս կարգի ձեռնարկները, ինչ որ օտար ազգերն, հեռաւոր եւրոպացիք կարող են կատարել, նոյն և Ռուսահայ դրամատէրերն աւելի յաջող կերպով կրնան շարունակել քանի որ զրացի են երկրին և թէ լեզուին և տեղական ցեղերին աւելի ծանօթ են, քան թէ եւրոպացին:

Գիւղատնաեսական գործերը նոյնպէս մեծ շահէր կարող են արտադրել և ռուսահպատակ զրամատէր մը իւր նիւթականովն և ռուսական բարձր ազգեցութեան շնորհիւն իւր կալուածքներում ապրող հայ դժբաղդ գիւղացւոյն թէ նիւթականի և թէ կեանքի ապահովութիւնը կրնայ պատճառել. և այս այնչափ յուսալի է, ինչպէս որ ռուսական հզօր կայսրութեան անունը ինքնին սարսափէ ձգում բարբարոս ցեղերի սրտում:

Իսկ վաճառականութիւնը, այն անքակտելի համարուած չինսկան պատերն անգամ քանուում է, յարաբերութիւնները մշակում, ճանապարհները ապահովացնում; զրացի և նոյն իսկ օտար ազգերի մէջ բարեկամութիւն ստեղծում և խաղաղութեան միջնորդի դեր է կատարում:

Ռուսական վաճառքներից նախապէս նաւթը և ապա շաբարը, բամպակեղէն տպածոյ (չիթ) ապրանքները և կարգ մետաքսեղէնները, նոյնպէս և շատ հասարակ կարեօր մանր ապրանքները Թրքահայաստանում կարող են մրցել եւրոպական ապրանաց հետ:

Ռուսահպատակ ամեն վաճառական տունները կարող են վայելել թէ զյոքի և թէ կեանքի կատարեալ ապահովութիւն շնորհիւ ռուսական զրօշակին. և ինչպէս որ Պարսկաստանում ռուսական ազգեցութեան շնորհիւ վաճառականն շահու ասպարէզն ընդպայնում է, նոյն և կարող է յաջողել Թիւրքիայում ինչպէս որ ՚ի Պօլս կան արգէն<sup>1)</sup>:

Ռուս կառավարութիւնն էլ անշուշտ այդ իւր հպատակ վաճառականաց խաղաղասէր գործունէութեամբն իւր քաղաքակրթիչ ազգեցութիւնը Թիւրքիայում աւելի բարձրացնելու համար, կարող է մաքսային ամեն զեջողու-

1) Թօքրես շատ կան, բայց դժբաղդաբար մենք լսեցինք միայն Թիփ-լիսի Գէորգով վաճառատան-և Բագույի Մանթաշով տան մասնաժիւղերի անունը:

թիւններն անել այն ամեն ապրանաց մասին, որք Պարսկաստան ներածելու համար արդէն իբրև մեծ դիւրութիւն մը, մաքսահարկը յետ տալիս է այդ ապրանքները փոխազրողներին:

Ահա թէ բարցյական և թէ նիւթական խաղաղ և կուլտուրական միջոցներով, Ռուսահայ եղբայրներն պարագ ունին իրենց վրա ռուսական ազգեցութիւնը իւր քաղաքակրթութեամբն հանդերձ մայնել Թիւրքահայաստանում, որով և իրենց թշուառ եղբայրների ցաւալի վեճակին մօտեցած լինելով, կուլտուրական և բարցյական միջոցներով եւրոպական օտար ազգերի կատարած մարդասիրական պարտքերն իրենց աչքով տեսնելով, իրենք ևս կարող պիտի լինին ռուսական հովանեաց ներքեւ իրենց այդ բարցյական և վսեմ պարտքերը գոնէ կիսոյ չափ կատարել:

Թիւրքիայում օտար և հեռաւոր ազգերի ազգեցութիւնը երբ օրէ օր զարգանում է, ռուս կառավարութեան արգելք մը չկրնար լինել որ նա էլ իւր բարձր ազգեցութեան բաժինն ունենայ իւր զրացի Թիւրքիայումն, և այդ ազգեցութիւնն յաջողվում է իւր բարցյական նպատակներով, երբ զրացի երկրների մշ առեւտրական բարւագ յարաբերութիւն մը հաստատվի:

Տնտեսական պայմաններով երկու պետութիւններին ևս օգտակար կրլինին Ռուսահայք, որնք թէ զրացի և թէ բարեկամ լինելու քաղաքակրթական մարգասէր ոգումն, երկու պետութեանց հպատակների և նրանց զանազան և այլակրօն ցեղերի հետ, պիտի մանեն խաղաղասիրութեան վրօշակի ներքեւ այս տեսակ ամեն ձեռնարկներով, որք և իրենց բարցյական պարտքերը կատարելով հանդերձ, և շահու աղբեւրներ բանալ կարող են:

Թիւրքահայոց վեճակին բարեկառութիւն մը սպասելու յուսով նորէն վստահ եմք, որ ռուսական ազգեցութեամբն

աւելի շուատով պիտի յաջողվի, քանի որ նա է միայն Թիւրքիայի հզօր զրացին: Այլ Սթէֆանցի ռուսական դաշնադրութիւնն իւր առանձին ուժով աւելի կարող էր ապահովացնել հայերի կեանքը, ինչ որ Բերլինի դաշնադրութիւնն չըկարողացաւ կատարել եւրոպական ամբողջ ուժով, լոկ նրանց անհամաձայնութեան շնորհիւն, որ շատ երկարատե կրնայ լինիլ:

Թիւրքիան էլ իւր զրացի հզօր կայսրութեան շնորհիւն և նրա աղդեցութեան ներքեւ աւելի կարող է բարենորոգուիլ և իւր ամբողջութիւնը ապահովնել քան թէ մի ուրիշով մը:

Սակայն քաղաքական հարցերից բոլորովին զուրա է մեր նպատակը, երբ ռուսական ազգեցութեան շնորհիւն առեւտրական և բարցյական ձեռնարկները ցոյց ենք տատալիս, որին միշտ ձեռնհաս կարող են լինել Ռուսահայ ինտելեգէնցիան էլ զրամանակը էլ որոնց նպատակ պիտի լինի միմիայն խաղաղամէր կուլտուրայի գործը մշակել Թիւրքահայաստանում:

Ահա այդ նուիրական պարտականութիւնը ծանրանում է և Թիւրքիայոց վրա, երբ Ռուսահայն նախապէս իւր պարտքերը կատարած լինի: Նրան շունչ պէտք է և մեր շունչը ռւսումն է: Ռուսման բարցյական ազգեցութենէն զուրկ պիտի մնան Թիւրքահայոց բազմաթիւ թշուառ որբերն, որք և անխնամ պիտի մնան, եթէ և Ռուսահայն չօգնէ նրանց, իւր պարտաձանաչութիւնը, գէթ այս կարեօր պարագայում, ցոյց տալու համար գործնականապէս:

Մենք օրինակներ յառաջ բերլինք և նորէն կրկնում ենք, որ հայ - ռուսական որբանոցները և Սանասարեանի վարժարանն, Ռուսահայ եղբարց մի - մի փառաւոր օրինակներ են:

Խոկ առեւտրական գտակարգին էլ ցոյց տված լինելով արդէն իւր յաջող պայմանները, յաւելացնում ենք, որ

նրա գործունէութիւնը, խաղաղասիրական ամեն պայման-ներով, թէ իրեն շահու մի միջոց է և թէ իւր նիւթական ձեռնարկովն բարոյական պարտքերը կատարելուն մի դիւ-րին եղանակ, որմէ պիտի օգտուին թէ երկու դրացի պե-տութիւններն իրենց բարեզ յարաբերական պայմաննե-րով, և թէ հպատակ ցեղերն ու ցեղակիցները:

Ուրեմն ամիսփելով մեր խօսքերը, կարող ենք ասել թէ, փոխանակ զաղթականներն իրենց տեղը ուղարկելուն վրա ուրախ լինելու, Ռուսահայ առեւտրական զարգացած դասակարգի կողմից, ինչպէս 'ի Պարսկաստան, նշյալքու և 'ի Թիւքիայ առեւտրական զաղթականութեան մը ձեռնար-կելուն վրա աւելի ուրախ կրնամք լինիլ որք մեր վերո-դրեալ ամեն միջոցներով կարող են խաղաղ կուլտուրայի առաքեալները համարուիլ:

Թիւքահայաստանի ամեն մի քաղաք դոնէ հինդ-վեց առեւտրական տներ թէ բացուին, իրենց ամեն մէկին զրա-գիր կամ գործակատար հինդ-վեց անձերով, այն ատեն ամեն տեղ պիտի ունենանք քսաններեսուն ուռւսահպատակ եղայրներ, իրենց ընտանեօք, իրենց սովորութիւններովն, իրենց զարգացումովն, իրենց կրթութիւնովն. և ահա զրանք մի-մի գործնական օրինակներ կրնան լինիլ մեր Թիւք-քահայոց ընտանեկան կրթութիւնը իւր նախնի կյոյ գրու-թենէն, կամ նորագոյն տգեղ ձեակերպութիւններէն բա-րեփոխելու համար:

Ընտանեկան յարաբերութիւնների շնորհիւ պիտի յա-ռաջանայ և ուսումնական բարձր և ամենակարեսոր հարցը, որին մասնակից կարող են լինել այդ զարգացեալ Ռու-սահայ եղայրնիս, թէ եկեղեցական և թէ դարրոցական ամեն հոգարաձութիւններին բարոյական աջակցութեամբ օգնելու, և նոյն իսկ ձրի զասաւանդութիւններ. անելու:

Ռուսահայ առեւտրականը, իւր շահուն առանց վնա-սելու, բարոյական մէջ պարտքերին մասնակից լինելով,

Ռուսահայոց ամեն բարեզ և խաղաղ յարաբերութիւն-ներին միջնորդ լինելով հանդերձ, եւրոպական քաղաքա-կրթութեան տարածուելուն նպաստելու միակ միջոցն պիտի լինի:

Երբ Ռուսահայ հասարակութիւնը մեր ցոյց տված պարտքերը կատարելով, Թիւքքահայոց մտաւոր մննդեան հոգը կատարելապէս յարգելու պարտաճանաչութիւնն ու-նեցաւ, այն ատեն շատ զիւրին կերպով պիտի հաստա-տուին շատ մը հայ - ռուսական որբանոցներ և վարժա-րաններ, որոնց համար պատրաստ ղեկավարներ պիտի լինին արդէն վազօրօք Թիւքքահայաստանում հաստատուած և երկրի պայմաններին ծանօթացած զարգացեալ առեւտրա-կան Ռուսահայեր:

Ռուսահպատակ եղբարց զաւակները, Թիւքքահայի թը-շուառ որբերին հետ, մի և նոյն ուսումնարանի մէջ, ձեռք ձեռքի տուած յառաջ պիտի գնան կրթութեան և ուս-ման ասպարիզում. և անոնք միայն պիտի կարողանան կատարեալ սէր և ինքնապիտակցութիւն յառաջ բերել երկու պետութեանց հպատակ հայ սերնդեան սրտում, որպէսզի աւելի հաւատարիմ և խաղաղ բնաւորութեամբ, իրենց բարոյական կրթութեան դերը յառաջ տանեն երկ-րին տիրող օրինաց համաձայն, և բարեկամական քաղցր սէրը յառաջ բերեն երկու դրացի պետութեանց զանա-զան ցեղերի մէջ մարդասիրական վեհ զգացումներով:

Այս ամեն ձեռնարկները, զոր մէնք ցոյց տուինք, ամեն ժամանակ կատարելու կարող են մեր Ռուսահայ եղբայր-ներն, միայն թէ պարտաճանաչութիւն զօրեղ կամք մը ունենան:

Մէր ցոյց տուած զարգացած առեւտրականներն պէտք է որ ինտելիգէնս և ուսեալ զասակարգից ընտրած գոր-ծակատարներով, խաղաղասիրական յարաբերութեան ա-ռաքեալներ լինելէն զատ, ուսւսական ազդեցութեան զօ-

րեղացնելուն միջնորդ մը լինելէն զատ, կարողանան նաև իրենց շահու միջոցները աւելացնել, իւլիով հեռաւոր եւ բոպացի շահաբաժնէն մի մասը գոնէ, որ միշտ լեցւում է եւրոպայ, շատ անշան մաս մը թողնելով զրացի Ռուսակայոց վաճառականութեանն:

Այդ զարգացեալ անձինքը կարող պիտի լինեն երկու կողմի հայերին զերար լաւապէս ձանչնալու միջոց մը լինել և միմեանց իրապէս օգտակար լինելու, միմեանց հանդէպ ունեցած բարոյական պարտքերը կատարելու դիւրութիւններ ընծայել: Փօխանակ թուսցիկ յոյսերով միմեանց խարելու և միշտ ապարդիւն և անպարտածանաչ մնալու, պէտք է որ իրապէս մեր բարոյական և մտաւոր զարգացման վրա միայն մտածեմք. և իրագործելի միջոցներով կատարել աշխատեմք մեր այն ամեն պարտքերը, որք յառաջադիմական միակ պատցըցներ կրնան համարուիլ ազգերի առջե մեր քաղաքակրթութեան բարձր աստիճաններին հասած լինելնիս ցոյց տալու համար:

Ռուսահայ հասարակութիւնը չըպէտք է սակայն որ սպասէ զրամատէր կամ վաճառական դասակարգին, այլ իւր, մանաւանդ իւր ինտելեգէնտ զարգացած դասուն վրա յոյս դնելով, կարող է դժբաղդ թրքահայ որբանոցների պատգայ ապահովութեան մը վրա մտածել և կամ նոր յարաբերական միջոցներ ստեղծել իւր թրքահայ եղօր բարոյական օգնութեան հասնելու:

Որդէն հաստատուած որբանոցների նիւթական ապագայի ապահովնելուց ՚ի զատ, յարմար և վայելու գործ մը կատարած կրլինէր Ռուսահայ հասարակութիւնը, եթէ Թիւրքահայաստանում մի նոր հաստատութիւն հիմնելու համար դրամագլուխ մը պատրաստէր ռուսական գանձարանին յանձնելով իւր լուման, որ հետզհետէ բարդուելով այդ նոր գործին ծառայէր. և մօտ ապագայում; Պօլսյ հայ Պատրիարքարանի հսկողութեան ներքեւ, ռուսական

բարձր աղղեցութեան շնորհիւ, ՚ի Պօլս կամ հայկական մի կեղրոնում հայ - ռուսական որբ-արուեստանոց մը հիմնել սկսէր:

Դժբաղդ որբն իւր առած ուսումնավ փոխանակ աւելի ևս թշուառ լինելու ապագային, իւր հացի դժուարութեան հանդիպած պահուն, եթէ իւր ուսման հետ և իւր հացը ճարելու միջոց մը գտնէ, իւր սիրած մի արուեստի մէջ կրթուելով և գործի մարդ լինելով, աւելի երջանիկ է: Թիվլիսի արուեստանոցի ծրագիրն մի գեղեցիկ օրինակ է մեր այս ներկայացրած նպատակին:

Ռուսահայ հասարակ ու հարուստ դասակարգերն իրենց փոքրիկ կամ մեծ գումարներով քանի մը տարուայ ընթացքում կարող են մի այդպիսի հաստատութեան համար ապահով զրամագլուխ մը գոյացնել:

Շատ անգամ զրված է, մենք էլ կը փութամք յայտնել մեր գոհունակութիւնը, որ Ռուսահայ հասարակութիւնն, մանաւանդ իւր միջին դասակարգովն, կտակների միջոցաւ, բարոյական հաստատութիւններին բաւական նպաստում է, որին կարող են նախանձել ոչ թէ միայն թրքահայք, այլ նոյն իսկ հայոց այդ կարողութեան զերադասող փոքր ազգերն էլ:

Նոյն կերպ կտակներին, մի առաջին բարեսիրական կեդրոն մը կրնայ լինիլ հայ - ռուսական որբանոցի մը կամ արուեստանոցի մը հաստատութիւնն, որին անշուշտ սիրայօժար պիտի նուիրեն իրենց նիւթական օժիար, նիւթականով բարի անուն յաւերժայնել ուզող բարեսէրները:

Թէ այսպիսի և թէ ուրիշ բարեսիրական գործերի մէջ Ռուսահայոց առաւելութիւնը յարգելով հանդերձ, լիայոյս եմք, որ այդ տեսակ մի ձեռնարկութեան համար բացված մի զրամագլիսի հանրային մասնակցութիւն Ռուսահայոց կողմից, պատճառ պիտի լինի նաև Թրքահայ դրամատէրերի և կամ հասարակութեան, որ իրենք էլ

իրենց կարողութեան չափովն Պօլսոյ Ազգային Վարչութեան ձեռամբ նոյն զրամագլխին նույիրեն իրենց նպաստները և միացնեն մայր գումարին Պօլսոյ ռուսական դեսպանատան միջոցաւ:

Եյս մեր կարծիքները ոչ թէ իբրև անսխալ մի կարծիք դնում ենք հրապարակի վրա, այլ ընդհակառակն, իբրև իրազործելի և բարեսիրական նպաստակների մի համառօտ ամփոփումը, յանձնում ենք հասարակային ուշադրութեան, նոյնպէս և սիրով պատրաստ եմք լսելու ամեն իրաւացի քննադատութիւններ, որք պիտի բղինն հասարակութեան լուրջ և բանիմաց և աշխարհայեաց ամեն այն անձերից, որոնց միացեալ լեզուն լրազրութիւնն է:

Ուստի կրկին անգամ յայտնում ենք, որ մեր փափաքելի յցսերու իրականացումը Ռուսահայ լրագրութեան վրա դնում ենք, որ եթէ կայ մեր կարծիքների մէջ մի իրազործելի կէտ, թող բարեհածի գոնէ այդ մինն էլ Ռուսահայ հասարակութեան յանձնարել և նոյն իսկ գործադրութեան նախաձեռնութիւնն ստանձնել:

Քաղցր է մեզ հաւատալ որ Ռուսահայ լրագրերն մեր քննադատութիւններին և մեր ցոյց արուած բարեսիրական մոտածումներին (առանց եսական կամ կուսակցական զգացումներին խառնելու), համաձայն կերպով ուժ պիտի տան, որով պիտի արդարացնեն մեր յցսը, թէ իրենք էլ գիտակից են արդէն ազգիս ցաւերին: Եթէ մենք մեր անկեղծ յարգանքը պահելով հանգերձ, անկեղծ սիրով մը մեր դիտողութիւններն ուղղել եմք իրեն, դա թող մեր կողմից մի յանդնութիւն չըհամարուի, զոր մեր կարծիքներին իբր վերջաբան, լրագրութեան ուղղում ենք նորէն մեր խօսքերը:

Մենք յարգում և ընդունում ենք լրագրական կուսակցութիւնների և միմեանց դէմ ուղղած այն ամեն

կարծիքները, որք յօգուտ հանրային շահուն, մրցում են ուղիղ գաղափարներով, և միմեանց համար խթանի և յառաջադիմութեան դեր կատարում են և ոչ թէ ատելութիւն սերմանող երկպառակութեան և անմիաբանութեան:

Մենք նոյնպէս զզուելով զզում ենք ատելութեան և նախանձու փողոցային բառերով զիրար անպատուող և յառաջադիմական ազգային անխառն ոգին կամ բարոյականի էական պահանջները մոռացող կըր հսականութիւնից, որով միայն լրագրութիւնը խոնարհում, իջնում է իւր հասարակաց օգտին ծառայելու նույիրական բարձրութիւնից:

Լրագրութիւնն, իբրև հանրային ընթերցարան կամ ուսումնարան, ինչպէս ամեն ազգերի մէջ նոյնպէս աւելի մեր ազգին համար, նշանակելի դեր կատարելու պարտքն ունի, որի առջև պէտք է խոնարհին թէ «ես»-ը և թէ «շահ»-ը:

Պարտուց և իրաւանց օրէնքին չէ կարող հակառակիլինաւելիգէնցիան, եթէ նա մի ուրիշից պարտաճանաշութիւն պահանջէ և իւր պարտուց գործազրութեան մէջ թերանայ, զրանով իւր արդար իրաւանց ձայնն էլ անսելի պիտի լինի միշտ:

Ուրեմն մեր անկեղծ վստահութեան արտայայտութիւնն փոխանակ վշտացնելու լրագրութեան կամ ինտելիգէնցիային, թող մի առիթ լինի քննելու և լրջօրէն մոտածելու մեր սակաւաթիւ գրողների կամ լրագրական կուսակցութիւնների աննախանձելի վեճակին վրա, որ համեմատելով միւս յետագէմ գասակարգերին, թերեւս աւելի շատ գատապարտելի է:

Եյս մեր քննադատութիւնները հաստատելու համար ուրիշ փաստ պէտք չէ մեզ քանի որ նոյն այդ թերթերում հրատարակուած մի յօգուածը, մեր հանրային դասակարգելը դատապարտելով, ասում էր և հետևեալլ.

«Մեր մամուլը և զրականութիւնը միշտ էլ չեն գտնվել իրենց կոչման բարձրութեան վրա և նրանց մէջ տարիներ շարունակ զործել են մարդիկ, որոնք մոլորեցրել և անբարցյականացրել են մեր հասարակութիւնը:»

### Ա. Մ Փ Ո Փ Ո Ւ Մ:

Եյլ ևս ինտելիքէնցիային անպատուաբեր է, որ միւս անտարբեր դասակարգերի յանցանքները՝ ի նկատի ունենալով հանդերձ, ինքն էլ անտարբեր մնայ:

Թող Խուսահայ ինտելիքէնցիան նոր ուղղութիւնով մը Թրքահայոց մտաւոր և բարցյական կրթութեան միջոցը բերուն ձեռնարկէ. գոնէ միայն նրա որբերին, որոնց թիւն տասնեակ հազարներ կազմում է:

Բարեսէր կարող անձինք Սանասարեանի հաստատութեան նման և նոյն իսկ աւելի բարձր կրթութիւններ թող հիմնեն:

Վաճառական և զրամատէր դասակարգերն, առևտրական յարաբերութիւններով ներդաշնակ մերձեցում մը թող ստեղծեն երկու տէրութեանց հպատակ հայ եղբարց մէջ:

Եյս ամեն ձեռնարկութեանց ամենակարեւոր նպատակը պէտք է լինի Թրքահայոց կարօտ կասակարգերին և թրշուառ որբերին բարցյական բարձրութեան հասցնել տեղական պահանջներին ծանօթանալ, համբերատար ոգուով անձնուէր սիրով, հեռատես հայեացքով կրել ամեն դժուարութիւնները, որով միայն կրթացվի մեզ կրթութեան յաջողութեան ձանապարհը:

Եյս ձշմարտութիւններ Խուսահային հասկցնելու համար, պարտուց ծանր բեռն իւր լրագրութեանն վերաբերում է, որին արդէն նույիրելով մեր հաւատքն ու յցոր ուղղում ենք իրեն և մեր «կարծիքները»:

967  
968  
969  
970



